ՀԱԱՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ ԳՀԾՁԲ-19/2

ք. Երևան 20 հունիսի 2019թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բլից Մեդիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բաժանորդագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 1.1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ցանկի (այսուհետ՝ Ցանկ) պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի ներկայացրած հայտերին համապատասխան և դրանցով սահմանված ժամկետում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագին և N 1.1 հավելվածում նշված Ցանկին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է

ամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք անդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 990130 (ինը հարյուր իննսուն հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի

դումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային	«Բլից Մեդիա» ՍՊԸ
ագրարային համալսարան» հիմնադրամ	ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 6
ք.Երևան, Տերյան 74	«Ինեկոբանկ» ՓԲԸ
«Արդշինբանկ» ՓԲԸ	Հ/Հ՝ 2050022042741001
Հ/Հ՝ 247010053103	ՀՎՀՀ՝ 02554494
ՀՎՀՀ՝ 01507028	
Վ. ՈՒԴՈՒՏՅԱՆ	Ա. ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ծառայության						
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Քանակը	Մատակարարման	
						Հասցեն	Ժամկետը
1.	79981100	Բաժանորդագրության ծառայություններ	Թերթերի, ամսագրերի բաժանորդագրություն: Թերթերը առաքվելու են ամեն օր մինչև առավոտյան ժամը 8:00-ն, իսկ ամսագրերը՝ ըստ լույսընծայման պարբերականության, դարձյալ մինչև առավոտյան ժամը 8:00-ն, ՀԱԱՀ 2-րդ մասնաշենք և հանձնվելու են Պատվիրատուի կողմից որոշված ստացողին: Թերթերը և ամսագրերը պետք է առաքվեն փաթեթավորված, փակ վիճակում: Թերթերի խմբագրության աշխատանքի դադարեցման կամ արձակուրդի դեպքում երկու օրվա ընթացքում հայտնել պատվիրատուին: Առաքվող փաթեթների հետ պետք է ներկայացվի տեղափոխման ապրանքագիր: Յուրաքանչյուր ամիս պետք է ներկայացվի թերթերի և ամսագրերի առաքման վերաբերյալ տվյալ ամսվա ամփոփ հաշվետվություն, որը Պատվիրատուն, համեմատելով իր ստացած թերթերի և ամսագրերի ու դրանց լույս ընծայման ժամկետների հետ, կամփոփի կատարված մատակարարումները: Վերջինիս արդյունքում կներկայացվի փոխադարձ հաշվարկի ակտ՝ երկկողմանի ստորագրման համար: Թերթերի և ամսագրերի ցանկը կից ներկայացվող նախահաշվում:	դրամ	1	ք.Երևան, Տերյան 74	2019թ., ըստ պատվիրատուի պահանջի

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային
ագրարային համալսարան» հիմնադրամ
ք.Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028

Ռեկտոր՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Բլից Մեդիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 6
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 20500220427410 01
ՀՎՀՀ՝ 02554494

Ա. ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ծառայության անվանումը	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ. ընտ ամիսների, այդ թվում*						
			VII	VIII	IX	X	XI	XII	Գումար (ՀՀ դրամ)
1	79981100	Բաժանորդագրության ծառայություններ	100%	100%	100%	100%	100%	100%	**990130**

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.12.2019թ.:

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային
ագրարային համալսարան» հիմնադրամ
ք.Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028

Ռեկտոր՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Բլից Մեդիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 6
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022042741001
ՀՎՀՀ՝ 02554494

Ա. ԴԱՎԹՅԱՆ

ՑԱՆԿ

ծառայության մատուցման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների

Թերթերի, ամսագրերի բաժանորդագրություն (2019թ. Երկրորդ կիսամյակ)							
Հ/Հ	Անվանումը	Բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Պարբերա-կանությունը կիսամյակի համար	2019թ. մեկ օրինակի վաճառքի գին (ՀՀ դրամ)	Գումարը (ՀՀ դրամ)
1.	Կրթություն	Հայաստանի Հանրապետության կրթության նախարարության շաբաթաթերթ:	հատ	11	26	170	48620
2.	Հայաստանի Հանրապետություն	Հայկական քաղաքական օրաթերթ:	հատ	3	126	95	35910
3.	Էկոնոմիկա և իրավունք	Տնտեսագիտության և իրավունքի վերաբերյալ ամսաթերթ: Պարբերականությունը 2 ամիսը մեկ:	հատ	1	3	4000	12000
4.	Հայաստան: Ֆինանսներ և Էկոնոմիկա	Ֆինանսատնտեսական ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	6	4000	24000
5.	Аграрная наука (Ագրարնայա նաուկա)	Գիտա-թեորետիկ գյուղատնտեսական ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	6	6250	37500
6.	Библиотековедение (Բիբլիոտեկովեդենիե)	Գիտա-պրակտիկ գրադարանային ամսագիր: Պարբերականությունը 2 ամիսը մեկ:	հատ	1	3	7400	22200
7.	Ветеринария (Վետերինարիա)	Գիտական և արտադրական անասնաբուժական ամսագիր:	հատ	1	6	6200	37200
8.	Виноделие и виноградарство (Վինոդելիե ի վինոգրադարստվո)	Գիտական գյուղատնտեսական ամսագիր:	հատ	1	2	11250	22500
9.	Геодезия и картография (Գեոդեզիա ի կարտոգրաֆիա)	Գեոդեզիայի, քարտեզագրության կադաստրի վերաբերյալ ամսաթերթ:	հատ	1	6	9700	58200
10.	Защита и карантин растений (Զաշիտա ի կարանտին ռաստենիյ)	Գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանության վերաբերյալ գիտական ամսաթերթ:	հատ	1	6	5000	30000
11.	Земледелие (Զեմլեդելիե)	Գյուղատնտեսական գիտական ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	4	5400	21600
12.	Землеустройство, кадастр и мониторинг земель (Զեմլեուստրոյստվո)	Գյուղատնտեսական գիտական ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	6	33500	201000
13.	Зоотехния (Զոոտեխնիյա)	Գյուղատնտեսական գիտական հեղինակավոր ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	6	4900	29400
14.	Инновации в образовании (Ինովացիի վ ոբրազովանիի)	Ուսումնական հաստատությունների նորարարական գործունեության կազմակերպչական, կառավարման, տնտեսական, հոգեբանական և մանկավարժական ասպեկտները, ժամանակակից կրթության արդիական հարցերի քննարկումները, ինչպես նաև նոր կրթական տեխնոլոգիաների վերանայումը արտացոլող ամսագիր:	հատ	1	6	6800	40800
15.	Кондитерское и хлебопекарное производство (Կոնդիտերսկոյե ի խլեբոպոկարնոյե պրոիզվոդստվո)	Հրուշակեղենի և հացաբուլկեղենի արտադրության վերաբերյալ գործնական տեղեկատվական ամսագիր: Նախատեսված է հրուշակեղենի և հացաբուլկեղենի ձեռնարկությունների ղեկավարների և	հատ	1	3	27400	82200

		մասնագետների համար:					
16.	Молочное и мясное скотоводство (Մոլոչնոե ի միսնոե սկոտովոդստվո)	Կաթնամթերքի և մսամթերքի վերաբերյալ գիտական, արտադրական ամսագիր: Նախատեսված է ագրոարդյունաբերական համալիրի մասնագետների համար:	հատ	1	4	6100	24400
17.	Мясные технологии (Միսնիե տեխնոլոգիի)	Միս վերամշակող արդյունաբերության արդիական հարցերի վերաբերյալ գործնական տեղեկատվության հեղինակավոր ամսագիր: Նախատեսված մսագործության ձեռնարկությունների ղեկավարների և մասնագետների համար:	հատ	1	6	11800	70800
18.	Пищевая промышленность (Պիշեվայա պրոմիշլեննոստ)	Գիտա- տեղեկատվական ամսագիր սննդի արդյունաբերության մասնագետների համար:	հատ	1	6	12500	75000
19.	Пчеловодство (Պչելովոդստվո)	Մեղվաբուծության վերաբերյալ ամսագիր: Պարբերականությունը 5 համար մեկ կիսամյակում:	հատ	1	5	2000	10000
20.	Тара и упаковка (Տարա ի ուպակովկա)	Մասնագիտացված ամսագիր փաթեթավորման նյութերի արտադրողների և սպառողների միջև տեղեկատվական, խորհրդատվական հաղորդակցությունների իրականացման համար:	հատ	1	3	6800	20400
21.	Экономика сельскохозяйственных и перерабатывающих предприятий (Էկոնոմիկա սելսկոխոզյաստվեննիխ ի պերեռաբատիվայուշիխ պրեդպրիյատիյ)	Ագրոարդյունաբերական համալիրի առաջատար տնտեսական ամսագիր: Պարբերականությունը յուրաքանչյուր ամիս:	հատ	1	6	14400	86400
	ԸՆԴՀԱՆՈՒՐ						**990130**

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային
ագրարային համալսարան» հիմնադրամ
ք.Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103
ՀՎՀՀ՝ 01507028

Ռեկտոր Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Բլից Մեդիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոսի 6
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022042741001
ՀՎՀՀ՝ 02554494

Ա. ԴԱՎԹՅԱՆ